

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ամայա Արմենի Սողոմոնյանի «20-րդ ԴԱՐԻ 2-րդ ԿԵՍԻ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ
ԷՄԻԳՐԱՆՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ / ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱԲՈԿՈՎ, ԽԱԼԵԴ
ՀՈՍԵՅՆԻ/»

Թեմայով ներկայացված Ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ա.Սողոմոնյանի ատենածոսությունը խիստ արդիական է: 20-րդ դարի 2 կեսը և
21-րդ դարի երկու տասնամյակները ապացուցեցին, որ մարդկությունը շարունակում
է պատերազմել և քաղաքակրթությունը չի փրկում քաղաքական, պետական և
ռազմական բռնություններից: Միգրացիան դարձել ժամանակակից աշխարհի
լրջագույն խանդիրներից մեկը: Այսպիսի բարդ միջազգային պայմաններում
միգրացիան կարող է լինել ոչ միայն ստիպված, այլ նաև ինքնակամ: Այն կարող է
սրացնել արդեն առկա սոցիալական, ֆինանսական, կրոնական և այլ խնդիրները,
կարող առաջացնել նոր, հասարակությանը և անձին դեռ անծանոթ խնդիրներ:
Անդրադառնալով Վ.Նաբոկովի և Խ.Հոսեյնիի ստեղծագործությանը, ատենախոսը
ընդգծում է և նշված խնդիրների կարևորությունը, և հայ գրականագիտության մեջ դեռ
չուսումնասիրված գրականության տեսակի՝ էմիգրանտական գրականության
առանձնահատկությունները:

2. Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսը նշում է, որ իր աշխատանքի նպատակն է «էմիգրանտական
գրականության համատեքստում վերլուծել էթնիկ հիշողության, հավերժական
վերադարձի, ամերիկյան գրական խառնարանի առանձնահատկությունները:
Աշխատանքում ներկայացված է էթնի մշակույթի և գերմշակույթի բախումը: Կարոտի,
ինքնության, պատկանելիության, բազմամշակութայնության, այլության և արքայի
գաղափարների քննությունն օգնում է վեր հանել մի շարք հոգեբանական
խրոդություններ, որոնց մարդն առերեսվում է գաղթական դառնալով»: Իսկ այդ
խնդիրները չեն կարող չարտացոլվել գրական ստեղծագործություններում: Մյուս
կողմից փոփոխվում են նաև գրականագիտական մոտեցումները նշված խնդիրների

վերաբերյալ, վերաինաստավորվում են նախկինում գրված երկերը: Ժամանակակից աշխարհում միգրացիան դառնում է հասարակության կողմից ընդունված երևույթ և ինքնություն: Դա ստիպում է գրականությանը պատկանելիության ու տան հասկացությունները վերանայելու, ուրիշ տեսանկյունից ներայացնելու: Ա.Սողոմոնյանը ընդգծում է, որ էմիգրանտական գրականության մեջ արտացոլվում են երեք հիմնական կատեգորիաներ՝ դիցաբանական, սոցիոլոգիական և հոգեբանական:

Վերը նշված նպատակը բացահայտելու համար ատենաձևության մեջ դրվում են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել էմիգրանտական գրականության արմատները, էմիգրանտ դառնալու պատճառները, էմիգրանտական գրականության ստեղծելու անհրաժեշտությունը,
- բացահայտել էմիգրանտական գրականության ժանրային, լեզվամշակութային առանձնահատկությունները,
- էմիգրանտ հեղինակների և նրանց ստեղծագործությունների հիման վրա ցույց տալ էմիգրանտական գրականության մշակութային նմանություններն ու տարբերությունները,
- անդրադառնալ փոքր ժողովուրդների խնդրին:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը:

Ատենախոսության նյութը կարող է օգտագործվել՝

- ժամանակակից արտասահմանյան գրականությանը նվիրված դասախոսություններում,
- ժամանակակից արտասահմանյան գրականությանը նվիրված դասագրքերում,
- Համեմատության նպատակով կատարվող տեսական ուսումնասիրություններում,
- էմիգրանտական գրականությանը նվիրված աշխատություններում,
- Գիտական և գիտահետազոտական ուսումնասիրություններում, որոնք բարձրացնում են ատենախոսությունում լուսավորված ուրիշ հարցեր,
- Գիտական հոդվածների վրա աշխատելիս

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, որը պարունակում է 105 աղբյուր: Ատենախոսության տեքստը շարադրված է 174 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության թեմայի հիմնական գաղափարները, առարկան, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, նշվել են հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Էմիգրանտական գրականության առանձնահատկությունները» բաղկացած է երկու ենթագլխից: Այստեղ քննարկվում են օտարման և ինքնաօտարման հասկացությունները, «ամերիկյան երազանքի» իմաստազրկումը, ինքնության որոնումը էմիգրանտական գրականությունում: Այս գլուխը մեծ մասամբ տեսական է:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Խալեդ Հոսեյնիի վիպական նորարարությունները էմիգրանտական գրականության համատեքստում» և բաղկացած է երեք ենթագլուխներից: Հեղինակի երեք վեպերի վերլուծությամբ ատենախոսը բացահայտում է արևելյան մոտիվները, օտարության խնդիրը, մեղքի և պատասխանատվության հարաբերակցությունը: Այստեղ բարձրացվում է նաև ֆեմինիստական որոշ խնդիրների քննարկում: Գլուխը կրում է որոշ չափով նկարագրողական բնույթ:

Երրորդ գլուխը՝ «Ռուս վտարանդին Ամերիկայում. արքայի վերծանումը և հաղթահարումը Վլադիմիր Նաբոկովի «Պնին» և «Գունատ կրակ» վեպերում» բաժանված է հինգ ենթաբաժնի: Այստեղ ատենախոսության հեղինակը շարադրում է Վ.Նաբոկովի գեղագիտական հայացքները, գրողի «ռուսական» և «ամերիկյան» փուլերի մի շարք էական առանձնահատկություններ, ինչպես նաև գրողի դուալիստական կերպը:

6. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը գերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները՝

1. Բովանդակության մեջ բացակայում է 3.1 ենթագլուխը:

2. Ներածության էջ 6 նշված էմիգրանտ հայ գրողների շարքում նշված են Դեյվիդ Խերոյանն ու Քրիս Բոհջայանն, ինչի հետ չենք կարող համաձայնվել: Նրանք էմիգրանտների զավակներ են, բայց ոչ էմիգրանտ, հայ ծագում ունեցող ամերիկյան ստեղծագործողներ, հասկապես Քրիս Բոհջայանն, ով իր հայոց նախնիներով սկսել է հետաքրքրվել բավականին մեծ տարիքում, ինչի մասին կան բազմաթիվ հարցազրույցներ:
3. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը ավելի ուշադիր լիներ հղումների ձևակերպմանը, ատենախոսության մեջ հղումները միանման չեն: Որոշ աղբյուրները բացակայում են օգտագործված գրականության ցանկում, օրինակ # 75, 76, 78, էջ 93-95: Իսկ էլեկտրոնային աղբյուրները նույնպես հեղինակ և վերնագիր ունեն:
4. Մեր կարծիքով, էմիգրանտական գրականության զարգացման տրամաբանությունից ելնելով, ավելի լավ կլինել տեղերով փոխել երկրորդ և երրորդ գլուխները:
5. Խորհուրդ կտաինք չավարտել ենթագլուխները հեղինակային մեջբերումներով սեփական եզրահանգումներից հետո:
6. Ցանկալի կլիներ ավելի լակոնիկ շարադրել եզրակացությունները, ներկայացնելով դրանք կետ առ կետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Ամալյա Արմենի Մոդոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունս (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Հոսեյնի)» հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ արտասահմանյան գրականության ժամանակակից ուսումնասիրություններում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ բարձր դպրոցների և բուհերի ուսումնական ծրագրերում, տեսական ուսումնասիրություններում:

Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն՝ ատենախոսությունը հազեցած է ինչպես տեսական գրականագիտական, այնպես էլ լեզվական նշանակություն ունեցող նյութերով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված է հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած 11 /տասնմեկ/ գիտական աշխատանքում:

Ամայա Արմենի Սողոմոնյանի «20-րդ դարի 2-րդ կեսի անգլալեզու էմիգրանտական գրականությունը (Վլադիմիր Նաբոկով, Խալեդ Հոսեյնի)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ժ.01.07 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԲՊՀ-ի «Համաշխարհային գրականության և
մշակույթի» ամբիոնի դոցենտ
Տիկին Կ. Գուլանյանի

Կ. Գուլանյան

Իսկությունը հաստատում եմ՝
ԲՊՀ գիտական քարտուղար



Հ. Փիլավջյան

01 դեկտեմբերի 2022թ.